

Թեան գործովք իւրեանց զեպիսկոպոսաց եւ զայլոց կառօտութիւնսն թեթեւագոյնս գործիցեն :

Լիցի եւ մեզ հաճոյ, եթէ զարքեպիսկոպոսս զայս զՅովհաննէս եւ ի մերոց զիմաց մտադիւրս տեսցես եւ զիրսն Հայոց յաջողութեամբ իմն եւ ըստ մտաց առաքողին շնորհիւ քով, որչափ ինչ հնար իցէ, եւ բարեացակամ կամօք ի զլուխ հանիցես : Զի է այս ընդունելի Աստուծոյ եւ մեծութեան Զերում ի պատիւ եւ ի փառս. զի քրիստոնեայք որ ի հեռագոյն կողմանս բնակիցին եւ որ ի թշնամեաց խաչին Քրիստոսի ընդ ծանու ստրկութեամբ տաղնապիցին, քոյովք արգահատանօք, քոյով թագաւորական սրտի մեծութեամբ զուարթացեալ զուարճացին :

Տուեալ ի Հռոմ առ սուրբ Առաքեալսն ընդ մատանեաւ ձկնորսի, յաւուր ԺԳ. Սեպտեմբերի 1602. ի քահանայապետութեան մերոյ ԺԱ. ամի :

Հայ վաճառականներու խնդիրը նաեւ յետոյ բանակցութեան նիւթ դարձաւ :

Հայաստանի քաղաքական պայմանները նոր կերպարանք առին այնուհետեւ : 1603ին Շահ Արաս անհամար բանակով քալեց դէպի Դաւրէժ—Նախիջևեան—Երեւան : Նոյն տարւոյն Նոյեմբերին պաշարման ենթարկուեցաւ Երեւան եւ յետ ութամսեայ պաշարման՝ 1604 Յունիսին դրաւուեցաւ Պարսիկներէն : Տալուին պաշարման մէջ էր, երբ անցաւ անկէ